



2017 թվականի դեկտեմբերի 27-ին ժամը 15:00-18:00 ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Քաղաքացիական երիտասարդական կենտրոն-ի գրասենյակում՝ կայացավ իրազեկման դասընթաց երթևեկող ուսուցիչների, աշակերտների և նրանց ծնողների, ինչպես նաև Կոտայքի մարզի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության Կրթության բաժնի պետ՝ պարոն Կարեն Հունանյանի մասնակցությամբ: Դասընթացի նպատակն է ՝ իրազեկել

իրեց «Երթևեկող ուսուցիչներին և աշակերտներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» պետական ծրագրի վերաբերյալ , ինչպես նաև վերհանել մարզում երթևեկող աշակերտների և ուսուցիչների տրանսպորտացիոն դժվարություններն ու խնդիրները: Դասընթացի ընթացքում ներկայացվեց «Երթևեկող ուսուցիչներին և աշակերտներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» պետական ծրագրը, ինչպես նաև այն մարզերի վիճակագրական տվյալները, որոնք ֆինանսավորվում են այդ ծրագրով: Տեղի ունեցան բուռն քննարկումներ, լսվեցին բոլոր մասնակիցների անհատական խնդիրները, որոնք առաջանում էին տրանսպորտային դժվարությունների հետևանքով, վեր հանվեցին մարզին հատուկ ընդհանուր խնդիրները , որոնց հիման վրա մշակվեցին առաջարկություններ խնդիրների լուծման համար: Քննարկումների արդյունքում պարզ դարձավ ,որ ի տարբերություն այլ մարզերի Կոտայքի մարզում ավելի շատ են երթևեկող ուսուցիչները, քան աշակերտները: «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ –ն իրականացնում է «Ճանապարհի դեպի դպրոց» ծրագիրը, որի Նպատակն է՝ նպաստել ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» ծրագրի շրջանակներում տրամադրվող փոխհատուցումների բաշխման մեխանիզմների բարելավմանը:

Ինչպես նաև նպաստել երթևեկության փոխհատուցման ամբողջական կիրառմանը, հանրակրթական դպրոցի այն ուսուցիչների և աշակերտների համար ովքեր դրա անհրաժեշտությունը ունեն և չեն ստանում պետական աջակցություն : Ծրագիրը նաև միտված է նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և բարձրացնել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը այս ոլորտում :

Ծրագրով նախատեսվում է կարիքների ուսումնաիրության հիման վրա բացահայտել ուսուցիչների և աշակերտների իրավունքների ոչ լիարժեք իրացման դեպքերը տրանսպորտացիոն փոխհատուցման գործընթացում :

ՀՀ հանրակրթական դպրոցներում բարձրացնել ուսուցիչների և աշակերտների իրազեկվածության մակարդակը տրանսպորտային փոխհատուցման «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային

ծառայությունների մատուցում» պետական ծրագրի վերաբերյալ : Իրականացնել աշխատանք ուղված ՀՀ պետական բյուջեից հանրակրթական դպրոցների աշակերտներին և ուսուցիչներին տրանսպորտային միջոցների փոխհատուցման մեխանիզմների կատարելագործմանը :

«Ճանապարհ դեպի դպրոց» ծրագիրը իրականացնում է «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնությամբ և Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանատան ֆինանսական օժանդակությամբ :

